բեանց տալոյ աննախանձաբար և անկողմնակալ վասն մեղուցելոյն, յետ երդմնեցուցանելոյ 70 որոնողքն 2 ատենաբանիւ բոլոր գրեցեալ անցք մեղաւորի մուծանեն 'ի խուց մի և փակեն դրունս և դնեն պահակ 'ի դռան, զի մի ելցէ և մտցէ ոք բայց Ղուբ վասն ըմպելոյ, և թոյլ տալ ելանելոյ վասն բնական հարկաւորութեան արտաքս ելանելոյ, և ընդ ելանողն ելցէ երկուս պահակս, զի ելանողն մի՛ խօսեսցի ընդ ումեք, մինչ կատարեսցի հարկաւորութիւնն իւր և կրկին մտցէ 'ի խուց, որում փակեալ 70, որոնողն կալով մնասցեն փակեալ դրամբ մինչև համահաւասարեսցի կամս եօթանասնից 'ի վիճաբանութենէ, այսինքն երկու տեսակս, կամ մեղաւորն յստակ և կամ աղտեղի և արժանի դատելոյ մի՛ 'ի երկուց տեսակէ, որն որ հաստատեսցի 'ի միտ որոնողաց գրեսցեն 'ի վերայ թղթի և բոլոր 70 որոնողքն ձեռնադրեսցեն և ելցեն 'ի խցէ, առաջնորդն նոցայ ելցէ հանդերձ ձեռնադրեալ թղթաւ առաջի աստենի իշխանի և դատաւորաց բարձրաձայն ասիցէ... Յստակ և եթէ աղտեղի... Աղտեղի եթէ վճիռն որոնողաց ելցէ յստակ իսկոյն աղատեսցի մեղաւորն 'ի բանտէ առանց ոչ մի խօսք յումեքէ, այլ եթէ վճիռն որոնողաց աղտեղի, իսկոյն մեղաւորն բերցեն 'ի աստեն իշխանաց և դատաւորաց, ընթեռնուցուն առաջի մեղաւորի գանգատն գանգատողին, և վկայութիւնքն վկա-